ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԺԱՆ ՆՈԷԼ ԳԵՐԻՆԻԻՆ «Մ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՐ ԺԱՆ ՆՈԷԼ ԳԵՐԻՆԻ, ՈՐ Ի ՄԱՐՍԷԼ, ՖՐԱՆՍԻԱ

Ցարգարժան պրն Գերինի,

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունելու Ձեզ՝ հայ ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամիդ եւ բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքները:

Մենք առանձնակի սիրով յիշում ենք Հովուապետական Մեր այցը Ֆրանսիա, երբ առիթ ունեցանք հանդիպելու Ձեզ եւ ի մոտոյ ծանօթանալու հայանպաստ Ձեր արգասաւոր գործունէութեանը: Մեզ համար մեծ ուրախութիւն էր ականատեսը լինել այն սիրուն ու յարգանքին, որը Ձեր նկատմամբ տածում է մարսէլահայ համայնքը հայ-ֆրանսիական հարաբերութիւնների զարգացման եւ Ֆրանսիայի կողմից Հայաստանի նորանկախացեալ Հանրապետութեանը ցուցաբերուող զօրակցութեան գործում Ձեր նախանձախնդիր եւ յետեւողական ջանքերի համար:

Դուք, իբրեւ Ֆրանսիայի Ծերակոյտի անդամ եւ Ուշ-Դիւ-Ռոն նահանգի Գլխաւոր Խորհրդի Նախագահ, Ձեր նպաստն էք բերել նաեւ Ֆրանսիայի կողմից Հայոց Ցեղասպա-

նութեան ճանաչմանը, որը մեծ մխիթարութիւն է Եղեռն վերապրած մեր ժողովրդին եւ խոսուն վկայութիւնը Ձեր երկրի եւ ժողովրդի արդարամիտ եւ ժողովրդավար նկարագրի:

Այսօր գոհունակութեամբ ենք անդրադառնում Ձեր աջակցութեանը Հայաստանի կրթական եւ առողջապահական հաստատութիւններին: Տակաւին երեկ կատարուեց Ձեր նախաձեռնութեամբ եւ Ուշ-Դի-Ռոն նահանգի Գլխաւոր Խորհրդի հովանաւորութեամբ Գիւմրիում կառուցուած հիւանդանոցի՝ Ֆրանսիական դիսպանսերի բացման արարողութիւնը, որի շնորհակալ գործունէութեամբ բազմաթիւ հայորդիներ բժշկական օգնութիւն պիտի գտնեն տնտեսական եւ ընկերային կեանքի ներկայ դժուարութիւնների պայմաններում: Ուրախալի է, որ նախատեսուում է բժշկական նմանատիպ կենտրոն բացել նաեւ Էջմիածին քաղաքում՝ Մայր Աթոռիս հովանու ներքոյ, ընդլայնելով կարիքաւորներին սատարելու աստուածահաճոյ ծրագիրը:

Ցարգարժան պրն Գերինի,

Հայրապետական այսու Կոնդակով բարձր գնահատելով հանդէպ մեր ժողովուրդը Ձեր բարեացակամ ու ազնիւ վերաբերմունքը, շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր մաղթանքն է, որ Բարին Աստուած հանապազ աջակից ու օգնական լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, երջանկութիւն եւ երկնապարգեւ ամենայն բարիք:

Այլեւ աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը խաղաղ երկնքի ներքոյ միշտ բարօր ու բարգաւաճ պահպանի Ձեր հիւրընկալ երկիրը՝ Ֆրանսիան, եւ հանապազ օրհնութեամբ միշտ ամուր պահի մեր ժողովուրդների բարեկամութիւնը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 170